

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև 4 ժամ:

ԴԱՍ 4

**ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ (ՄԱԿ-Ի ԵՎ ԵԽ-Ի)
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՅՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ (հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)



Մինչև 5 րոպե

Անչափահասների գործերով արդարադատության իրականացումը կանոնակարգվում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական տարաբնույթ ակտերով: ՀՀ Սահմանադրության [1] հոդված 6-ի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի [2] համաձայն՝ ՀՀ կողմից վավերացված կամ հաստատված միջազգային իրավական պայմանագրերը հանդիսանում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, որոնք օժտված են բարձրագույն իրավաբանական ուժով ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի համեմատ: Միակ պահանջն այն է, որ վավերացվող միջազգային փաստաթղթերը չհակասեն ՀՀ Սահմանադրությանը: ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 180 րոպե

այսպես կոչված, «կոշտ» իրավունքը, որն ունի պարտադիր ուժ ՀՀ-ի համար: Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս ՀՀ համար պարտադիր ուժ ունեցող միջազգային փաստաթղթերի շարքին է դասվում, օրինակ, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան [4]:

Միջազգային իրավունքում առանձնացվում է նաև, այսպես կոչված, «փափուկ» իրավունքը, որի շարքին են դասվում միջազգային կառույցների կողմից ընդունված հռչակագրերը, ուղենիշները, կանոնները, հանձնարարականները և այլ փաստաթղթեր: Վերջիններս թեև առաջին հայացքից պարտադիր ուժ չունեն ՀՀ համար, սակայն այդպիսին կարող են ձեռք բերել ՀՀ համար պարտադիր՝ միջազգային դատական ատյանների, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշումներում արտացոլվելու պարագայում (անկախ նրանից, թե որ պետությանն է գործն առնչվում): ՀՀ դատական օրենսգրքի [6] հոդված 15-ի 4-րդ մասը սահմանում է, որ. «...Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) **պարտադիր** են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»: Հետևաբար, անչափահասների գործերով ՄԻԵԴ որոշումները նշված պահանջների պահպանման դեպքում ունեն պարտադիր բնույթ:

Անչափահասների գործերով արդարադատության

իրականացման գործընթացում կիրառություն ստացող միջազգային իրավական փաստաթղթերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

Խումբ 1. Համընդհանուր կանոնակարգումներ պարունակող փաստաթղթեր, որոնք վերաբերելի են ինչպես չափահասներին, այնպես էլ անչափահասներին: Օրինակ՝ Քրեական գործերով վերականգնողական արդարադատության ծրագրերի կիրառման հիմնական սկզբունքները, Եվրոպայի խորհրդի (ԵԽ) նախարարների կոմիտեի թիվ R(99)19 հանձնարարականը անդամ պետություններին՝ քրեական գործերով մեղիացիայի վերաբերյալ [19], ԵԽ նախարարների կոմիտեի թիվ R(89)12 հանձնարարականը անդամ պետություններին՝ բանտում կրթության վերաբերյալ [20], ԵԽ նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2001)1 հանձնարարականը անդամ պետություններին՝ Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ [21], ԵԽ նախարարների կոմիտեի թիվ CM/Rec 2003 [22] հանձնարարականը անդամ պետություններին՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ [25]:

Այս փաստաթղթերի շարքում ընդգրկված են նաև այնպիսիք, որոնց առանձին դրույթներում նախատեսված են հատուկ կանոնակարգումներ անչափահասների համար, մասնավորապես.

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան [3], որի հոդված 5-ի կետ 1-ի (դ) ենթակետը սահմանում է անչափահասին ազատությունից զրկելու հիմքը՝ անչափահասին կալանքի վերցնելն օրինական կարգադրության հիման վրա դաստիարակչական հսկողության համար կամ նրա

օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով, իսկ հողված 6¹-ի 1-ին կետը՝ դռնփակ դատաքննության հնարավորությունը, եթե դա են պահանջում անչափահասի շահերը:

- Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) [7] 8-րդ կետի (ե) ենթակետը սահմանում է մանկահասակ իրավախախտներին մեծահասակներից առանձին պահելու պահանջը, կետ 21-ը՝ մանկահասակների համար մարզանքի և խաղերի հնարավորության երաշխավորումը՝ սահմանված ժամանակահատվածում:

- Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների նկատմամբ կիրառվող ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններում (Բանգկոկյան կանոններ) [23] նախատեսված են հատուկ դրույթներ՝ իգական սեռի անչափահասներին ազատությունից զրկելու, քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժի իրականացման առումով:

- Կալանքի կամ ազատազրկման որևէ ձևի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության հիմնական սկզբունքների [15] սկզբունք 16-ի 3-րդ կետը սահմանում է, որ եթե կալանավորված կամ ազատազրկված անձն անչափահաս է, իրավասու մարմինը պետք է սեփական նախաձեռնությամբ իրականացնի նրա ընտանիքի անդամներին կամ խնամակալներին այդ մասին ծանուցումը:

- ԵԽ նախարարների կոմիտեի թիվ Rec (2006)2՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ անդամ պետություններին հասցեագրված հանձնարարականում [22] նախատեսված են հատուկ կանոններ՝ կալանավորված կամ

դատապարտված անչափահասներին կամ դատապարտված ծնողի հետ քրեակատարողական հիմնարկում գտնվող մանկահասակ երեխաներին քրեակատարողական հիմնարկներում պահելու վերաբերյալ:

- ԵԽ նախարարների կոմիտեի թիվ 2006(13)՝ կալանքի տակ պահելու, կալանքի տակ պահելու պայմանների և չարաշահումից պաշտպանված լինելու երաշխիքների տրամադրման վերաբերյալ անդամ պետություններին հասցեագրված հանձնարարականում [24] հատուկ դրույթներ են նախատեսված, օրինակ՝ կալանավորված երեխաների կրթությունը ապահովելու պահանջի վերաբերյալ:

Խումբ 2. Բացառապես անչափահասների վրա շեշտադրում կատարող և նրանց գործերով արդարադատության իրականացումը կանոնակարգող փաստաթղթեր, որոնց թվին են դասվում.

- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, որով սահմանվում են երեխայի հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Մասնավորապես, հոդված 37-ը կանոնակարգում է ազատությունից զրկելու հնարավորությունը՝ սահմանելով դրա կիրառումը միայն որպես ծայրահեղ միջոց և հնարավորինս կարճ ժամանակով, ազատությունից զրկված երեխայի քրեակատարողական հիմնարկում պահելու պահանջները, իսկ հոդված 40-ը ներկայացնում է հանցանք կատարած անչափահասի դատավարական իրավունքները, ինչպես նաև՝ անչափահասների նկատմամբ վերականգնողական արդարադատության կիրառման, «երեխայի լավագույն շահից» գործելու անհրաժեշտությունը:

- Նվազագույն տարիքի մասին կոնվենցիան [5]

կանոնակարգում է անչափահասների զբաղվածությունն ու աշխատանքը և սահմանում այն նվազագույն տարիքը և պայմանները, որոնց պահպանման պարագայում անչափահասին կարելի է ներգրավել աշխատանքի: Այս կոնվենցիան կարևորվում է, օրինակ՝ անչափահասների նկատմամբ հանրային աշխատանքներ պատժատեսակը կիրառելիս:

- Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համար ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ) [8] իրավախախտում կատարած անչափահասների իրավունքները կանոնակարգող առանցքային նշանակություն ունեցող փաստաթուղթն է, որը սահմանում է անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու պայմանները, «ստատուսային» իրավախախտումների համար քրեական պատասխանատվության արգելքը, անչափահասների գործերով արդարադատության նպատակները, գործի քննության փուլերում և արդարադատությունն իրականացնելիս պաշտոնատար անձանց հայեցողական լիազորությունների ծավալը, պատժի նշանակման սկզբունքները, առանձին պատժատեսակների կամ ներգործության միջոցների կիրառման պայմանները, քրեակատարողական հիմնարկում կամ դրանից դուրս դատապարտյալի հետ վարվեցողության պահանջները, անչափահասների իրավախախտումների քննության կարգը և նրանց դատավարական իրավունքները, գործի արտադատական լուծումը, անչափահասների գործերով մասնագիտացված հիմնարկների և մասնագետների, օրինակ՝ ոստիկանների առկայության անհրաժեշտությունը և այլն:

- Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ) [9] սահմանում են անչափահասների

հանցավորության կանխման ընդհանուր ուղղությունները, այն գործոնները, որոնք պետք է վեր հանվեն վերջիններիս հանցավոր վարքը կանխելու առումով, անչափահասների հանցավորության կանխման կամ անչափահասների հանդեպ կատարված ոտնձգություններին արձագանքելու գործընթացում ներգրավվման ենթակա դերակատարներին:

- Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Հավանայի կանոններ) [11] կանոնակարգում են անչափահասին ազատությունից զրկելու, ինչպես նաև նրա կողմից ազատագրվում պատժատեսակի կրման պայմանները:

- Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշները (Վիենայի ուղենիշներ) [12] սահմանում են այն հիմնախնդիրները, որոնց պետք է ուշադրություն դարձնել՝ առավելագույնս երեխայամետ արդարադատություն երաշխավորելու համար, այդ թվում՝ մասնագիտացված դատարաններ, գործերի լուծման արտադատական կամ այլընտրանքային եղանակներ ստեղծելու, իրավախախտում կատարած, դրանից տուժած կամ իրավախախտմանն ականատես անչափահասների պաշտպանությունն իրականացնելու ճանապարհով:

- Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները [13] սահմանում են այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների գործերով, սահմանում են նրանց իրավունքները, այդ թվում՝ արժանապատիվ և կարեկից վերաբերմունքի արժանանալու, խտրականությունից պաշտպանված լինելու, տեղեկացված լինելու, լսված լինելու,

տեսակետներ և մտահոգություններ արտահայտելու, արդյունավետ օժանդակություն ստանալու, մասնավոր կյանքի գաղտնիության, պատճառված վնասի հարթման:

- Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ) [14] կանոնակարգում են անչափահասների հանդեպ մինչ դատավճռի կայացումը, դատավճիռ կայացնելիս կամ դրանից հետո, ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող ներգործության միջոցների, պատիժների, խափանման միջոցների կիրառման պայմաններն ու ընթացակարգը:

- ԵԽ նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008)11 հանձնարարականը անդամ երկրներին՝ պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ [16] սահմանում է անչափահասների նկատմամբ պատիժների կամ ներգործության այլ միջոցների կիրառման սկզբունքները, դրանց առանձին տեսակների նշանակման և կիրառման ընթացակարգերը:

- ԵԽ նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)20 հանձնարարականը անդամ երկրներին՝ անչափահասների հանցավորությանն արձագանքելու նոր ուղիների և անչափահասների գործերով արդարադատության դերի վերաբերյալ [17] մանրամասնում է անչափահասների արդարադատության իրականացման ընթացակարգային պահանջները:

- ԵԽ նախարարների կոմիտեի թիվ Rec(2005)5 հանձնարարականը անդամ երկրներին՝ փակ հաստատություններում պահվող երեխաների իրավունքների վերաբերյալ [18]

Նշված միջազգային իրավական ակտերում տեղ գտած անչափահասների գործերով արդարադատության

սահմանում է փակ հաստատություններում, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում երեխաներին պահելու պահանջները:

Այս դասի շրջանակներում ներկայացրինք

- միջազգային փաստաթղթերի նշանակությունը անչափահասների գործերով արդարադատությունն իրականացնելիս,
- ինչպես նաև այդ գործընթացում առավել հաճախ կիրառվող միջազգային իրավական փաստաթղթերն ու դրանցում տեղ գտած կանոնակարգումները:

Հաջորդ դասի շրջանակներում կուսումնասիրենք

- ազատագրկման հետ կապված պատժատեսակների և քրեաիրավական արձագանքման այլ միջոցների կիրառման առանձնահատկությունները:

գործընթացի իրականացման առումով կարևորություն ունեցող առանձին դրույթների առավել մանրամասն կձևոթանաք Դասեր 5, 6, 7, 8, 9-ի շրջանակներում:

ԲԱՌԱՐԱՆ



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացե՛ք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձե՛ք դրանց:

«Կոշտ» իրավունք – Միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակ (կոնվենցիաներ, երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրեր, դաշնագրեր, համաձայնագրեր, արձանագրություններ), որոնց որևէ պետության մասնակցությունը հնարավոր է դառնում այդ պետության կողմից վավերացնելուց կամ հաստատվելուց հետո: Պետության կողմից վավերացված կամ հաստատված պայմանագրերը դառնում են այդ պետության համար պարտադիր ուժ ունեցող:

«Փափուկ» իրավունք – Միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակ (հանձնարարականներ, կանոններ, սկզբունքներ, ուղենիշեր), որոնք սահմանվում են միջազգային կառույցների մակարդակում, սակայն չեն ենթադրում պետությունների կողմից դրանց վավերացում կամ հաստատում: Այդ փաստաթղթերը պետության համար պարտադիր ուժ չունեն և առավելապես կրում են առաջարկների, կոչերի, հորդորանքների բնույթ:

«Ստատուսային» իրավախախտում – Արարք, որը իրավախախտում է համարվում միայն անչափահասի կողմից կատարվելու դեպքում, մինչդեռ նույն արարքը չափահասի կողմից կատարելը իրավախախտում չէ (օրինակ՝ ալկոհոլ գործածելը, տանից փախչելը): Այսինքն՝ այս արարքները համարվում են իրավախախտում՝ պայմանավորված անչափահասի կարգավիճակով:

Հայեցողական լիազորություններ – Օրենսդրությամբ պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց



Մինչև 25 րոպե

վերապահված իրավունք՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

Երեխայի լավագույն շահ – Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև՝ նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը:

Վերականգնողական արդարադատություն – Արդարադատության հայեցակարգ, որը շեշտադրում է կատարում ոչ թե հանցանք կատարած անձին պետության կողմից քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու, այլ առավելապես հանցանք կատարած անձի և տուժողի (նրա օրինական ներկայացուցիչների, ծնողների) երկխոսության արդյունքում գործի

հանգուցալուծում գտնելու, կատարված հանցավոր արարքով պատճառված վնասը, խախտված իրավունքները վերականգնելու, կատարված արարքի արդյունքում հնարավոր հետագա բացասական հետևանքները կանխելու, հանցանք կատարած անձի վերասոցիալականացման և նրա հետագա հանցավոր վարքագիծը կանխելու վրա:

Երեխայամետ արդարադատություն – Արդարադատության իրականացման մոտեցում՝ հիմնված երեխայի տարիքային առանձնահատկությունները և կարիքները հաշվի առնելու և ըստ այդմ՝ համաչափ արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի հանդեպ անհատական մոտեցում ցուցաբերելու, երեխային պիտակավորումից (ստիգմատիզացիայից) զերծ պահելու սկզբունքների վրա: Երեխայամետ արդարադատությանը բնորոշ հատկանիշներ են՝ երեխայի տարիքով պայմանավորված առանձնահատկություններին հարմարեցված լինելը, երեխայի կարիքներին առաջնահերթություն տալը, երեխայի համար մատչելի, հասանելի լինելը, գործերի արագ քննությունը, այս կամ այն որոշման՝ երեխայի համար հնարավոր բացասական հետևանքները կանխատեսելը, երեխայի իրավունքները, այդ թվում՝ գործի քննությանը մասնակցելու, լսված լինելու, սեփական դիրքորոշումները, ցանկությունները արտահայտելու, անձնական և ընտանեկան կյանքի, անձնական անձեռնմխելիության և արժանապատվության իրավունքները երաշխավորելը:

Փակ հաստատություն – Հանրության ազատ ելումուտը սահմանափակող, որոշակի կատեգորիայի ան-

ձանց մեկուսացված պայմաններում պահելու համար նախատեսված հաստատություն, ինչպիսիք են՝ քրեակատարողական հիմնարկները, մանկատները, գիշերօթիկ դպրոցները, հոգեբուժարանները:

Մեդիացիա – Դատաքննությանը կամ քրեական վարույթին այլընտրանք հանդիսացող գործընթաց, որի ընթացքում անկողմնակալ, չեզոք անձի աջակցությամբ տուժողը և իրավախախտում գործած անձը կամովին, քննարկումների արդյունքում հասնում են տեղ գտած խնդրի՝ երկու կողմերի համար ընդունելի լուծման:

Պրոբացիա – Սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ՝ ուղղված հանցանք կատարած անձի վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու ընթացքում հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով: